

Ա.Հ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2011

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Հ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿՑՈՒԹ

ԵՊՀ միջազգային հարաբերություններ ֆակուլտետի
դիվանագիտական ծառայության և
մասնագիտական հաղորդակցման ամբիոնի
(բակալավրիատի 1-3) կուրսերի ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԳ- 809.27 : 327 : 378
ԳՄԳ- 81.2 Արաբերեն + 66.4 + 74.58
Ի 830

Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի խորհուրդը

ԻՄՐԱՅԵԼՅԱՆ Ա. Հ.

Ի 830 Արաբերեն լեզվի դիվանագիտական մասնագիտական
հաղորդակցման դասընթացի ծրագիր/ Ա.Հ. Իսրայելյան: –
Եր.: ԵՊՀ հրատ., 2011 թ., 16 էջ:

Նախատեսված է ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դիվանագիտական ծառայության և մասնագի-
տական հաղորդակցման ամբիոնի բակալավր համակարգում
սովորող ուսանողների համար:

ISBN 978-5-8084-1410-5

ՀՏԳ- 809.27 : 327 : 378
ԳՄԳ- 81.2 Արաբերեն + 66.4+74.58

© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.
© Իսրայելյան Ա.Հ., 2011 թ.

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Արաբերեն լեզվի դիվանագիտական ոլորտում մասնագիտացված դասընթացի ծրագիրը նախատեսված է Երևանի պետական համալսարանի դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի բակալավր համակարգում սովորող ուսանողների համար:

Մասնագիտացված դասընթացի հիմնական նպատակն է ուսանողին սովորեցնել ազատ տիրապետել արաբերեն բանավոր և գրավոր խոսքին, խորացնել նրանց հաղորդակցման կարողությունները, ինչպես նաև ծանոթացնել մասնագիտական-դիվանագիտական, հասարակական-քաղաքական, տնտեսական, երկրագիտական և առօրյաում օգտագործվող բառապաշարին ու դիվանագիտական տերմիններին (3000-4000 միավոր):

Օտար լեզվի ուսուցման նպատակները շատ բազմազան են, ուստի արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթացի շրջանակներում առաջարկվում է երկու հիմնական նպատակ.

1.1 Գործնական նպատակ

Արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթացի դասավանդման հիմնական և առաջնային նպատակը հաղորդակցելն է. ընդլայնելն է այն ուսանողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները, հաղորդակցական իրազեկությունը, որի ուսուցումը պետք է տարվի ողջ ուսումնական գործընթացում: Ուստի կրթական և դաստիարակչական խնդիրներն իրագործվում են հաղորդակցական նպատակի հետ զուգահեռ:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթացի գործնական նպատակն է ուսանողի մոտ բանավոր և գրավոր հաղորդակցման հիմք ստեղծելը: Դա ապագա դիվանագետի համար խոսակցությունը լսելու և հասկանալու ամենակարևոր գործոններից մեկն է:

Լեզուն դասավանդելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների մայրենի լեզվից ձեռք բերած փորձը՝ ինչպես դրա բացասական, այնպես էլ դրական ներգործության առումով: Արաբերեն լեզվի ուսուցման վերո-

հիշյալ տարբերություններն այլ առարկաներից արտացոլվում են ուսումնական նպատակների ձևակերպման, ուսումնական գործընթացի առանձնահատկությունների, մեթոդների և հնարների համակարգի մեջ:

Օտար լեզվի յուրահատկությունը մարդկային հանրույթի որոշակի գործունեության ուսուցումն է: Ի տարբերություն այլ ուսուցանվող առարկաների, միջազգային հարաբերությունների ֆակուլտետում արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթացի օբյեկտը ոչ թե գիտությունն է լեզվի մասին, այլ լեզվի միջոցով ծավալվող խոսքային գործունեությունը: Մասնագիտացված դասընթացի ուսուցման գործընթացում ձեռք բերված լեզվական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ինքնանպատակ չեն և դրանք կարող են միջոց հանդիսանալ այլ նպատակների իրականացման համար:

Մասնագիտացված դասընթացի ուսումնասիրության հիմնական նպատակը պետք է լինի նրա գործնական տիրապետումը՝ մասնագիտական-դիվանագիտական հաղորդակցման եզրերում:

1.2 Կրթական նպատակ

Ընդհանրապես արաբերեն լեզուն ժամանակակից աշխարհի հարուստ լեզուների շարքում, միջազգային և դիվանագիտական հարաբերություններում իր ուրույն տեղն ունի: Նրա յուրացումն ու օգտագործումը մեծ չափով կնպաստի նաև հայ և արաբ ժողովուրդների, Հայաստանի Հանրապետության և արաբական երկրների միջև բարեկամական, գործարար և մշակութային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը: Այն, որպես ուսումնական առարկա, կնպաստի ուսանողների ընդհանուր կրթությանը, կզարգացնի նրանց խոսքն ու մտածողությունը, կհարստացնի նրանց գիտելիքները դիվանագիտությունից, դիվանագիտության պատմությունից, աշխարհագրությունից և այլ առարկաներից:

Կրթական խնդիրները հետապնդում են՝

- տրամաբանական մտածողության զարգացում՝ մեկ այլ լեզվի կամ առարկայի հետ համեմատությամբ
- որոշակի տեղեկատվության ձեռքբերում
- ծանոթացում արաբերեն լեզվի միջոցով արաբական Արևելքի մշակութային հարստությանը, ավանդույթներին, կենցաղին, արաբական երկրների դիվանագիտական հարաբերությունների հարուստ և հետաքրքիր պատմությանը, իսլամին և այլ հետաքրքրաշարժ իրադարձություններին:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթաց ասելով հասկանում ենք այն ամենը, ինչ ավանդական մեթոդիկայում մտնում է ուսուցման բովանդակության մեջ: Այսինքն այն ամենը, ինչի հիման վրա տարվում է ուսուցումը և ողջ ուսումնական գործընթացը: Ուսումնական գործընթացում դասընթացի բովանդակությունը հիմնված կլինի գործնական-լսարանային չափորոշիչների վրա: Եվ քանի որ արաբերեն լեզվի դասավանդման առաջատար գործառնությունը գրավոր կամ բանավոր հաղորդակցությունն է, ուստի պետք է հաշվի առնել հաղորդակցման գործընթացի օրինաչափությունները՝ պայմանները, նպատակները և այլն:

Արաբերեն լեզվի գործնական տիրապետման հիմքում ընկած են խոսքային գործունեության երեք տեսակների ձևավորում՝ ունկնդրելու, խոսելու և ընթերցելու, որն ուսուցման տարբեր փուլերում աստիճանական պրոցես է:

Գործնականում արաբերենին տիրապետելը կնշանակի ձևավորել խոսելու կարողություններ, հմտորեն և ճշգրիտ տիրապետել լեզվական նյութին և օգտագործել յուրացված լեզվական նյութը նոր իրադրություններում:

3. ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍ

1-ին և 2-րդ կիսամյակ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում գրական արաբերեն լեզուն որպես երկրորդ լեզու դասավանդվում է առաջին կիսամյակից և շարունակվում մինչև վեցերորդ կիսամյակ: Առաջին երկու կիսամյակներում արաբերեն լեզվի հիմնական դասընթացի ուսուցման բովանդակությունը ներառում է լեզվական իրազեկության, հանրալեզվաբանական իրազեկության, գործաբանական իրազեկության բաղադրիչները, ինչպես նաև ժամանակակից արաբերենի լեզվական, դիվանագիտական-մասնագիտական բառապաշարային, հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական և տիպաբանական առանձնահատկությունները:

3.1 Հնչյունաբանության

Գրական արաբերեն լեզվի ծագումնաբանությունը: Արաբերեն լեզվի զարգացման փուլերը: Արաբերենի տարածվածությունը, լեզվական միջավայրը: Համառոտ տեղեկություններ արաբերեն լեզվի պատմության վերաբերյալ:

Արաբերեն լեզվի հնչյունները և դրանց բնութագրերը: Չայնավորների համակարգը, սկզբունքները: Երկար և կարճ ձայնավորներ:

Բաղաձայնների համակարգը, սկզբունքները: Քերականական հասկացություններ՝ հարֆ, հարաքա, ֆաթհա, դամմա, քասրա, սուքուն: Հարֆ սաքին, հարֆ մութահարիք: Թանվին: Հնչյունների ճիշտ արտասանությունը:

Վանկ: Գրությունների անջատ, սկսող, շարունակվող և ավարտվող դիրքերը: Բառի շեշտը և նրա հնչյունական դերը: Ուղղագրական և կետադրության հիմնական կանոնները:

Արաբերեն բառը և նրա տեսակները: Բառի կազմությունը: Պարզ և ածանցավոր բառեր: Նույնանուն բառեր: Հոմանիշ և հականիշ բառեր:

3.2 Ձևաբանություն

Ձևույթ և ձև: Հիմնական և երկրորդական ձևույթներ: Բառային և քերականական իմաստ: Արմատ, հիմք և վերջածանց:

Արաբերենի խոսքի մասերը, դրանց դասակարգման սկզբունքներն ու հիմունքները: Անվանական և ոչ անվանական խոսքի մասեր: Գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բայանվանակերտ ածանցներ:

Երկակի թիվ, կազմությունը: Հոգնակի թվի կազմությունը: Թեքվող և չթեքվող խոսքի մասեր:

▪ Դերանուն

1. Անձնական դերանուններ: Կապակցական և անջատ դերանուններ: Անջատ դերանվանական ձևերը: Կապակցական դերանվանական ձևերը:
2. Ցուցական անուններ: Ցուցական անունների ձևերը: Տեղի ցուցական անունները:
3. Հարաբերական անուններ: Որոշյալ հարաբերական անուններ: Անորոշության նշանակության անուններ:

4. Հարակցական անուններ: Հարցական անունների տեսակները:
5. Ժխտական դերանունները: Դերանունների հոլովման յուրահատկությունը:

- **Գոյական անուն**

Պատկանելիության կարգը: Հատկացուցիչ-հատկացյալ: Հոլովական համակարգը արաբերենում՝ ուղղական, հայցական և սեռական հոլովներ: Գոյականակերտ վերջածանցներ:

- **Ածական անուն**

Համեմատության աստիճան: Կադապարը և նրա կազմությունը:

- **Թվական անուն**

Քանակական, դասական, կոտորակային թվականները, թվականակազմ ածանցներ, տոկոսների արտահայտումը արաբերենում: Ամբողջականության և հավաքականության արտահայտումը:

- **Ժամերի արտահայտման ձևերը**

3.3 Բայ

Ստորոգման ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Ստորոգման պարզ և բաղադրյալ ժամանակաձևերը: Ասույթի հաղորդակցական կառուցվածքը, կազմությունը: Բայական նախադասությունների կառուցվածքային կադապարները: Բայական նախդրությամբ ստորոգական կառույցներ: Բայական տիպերը, եղանակը, ժամանակը: Բայը և նրա խոնարհումը: Տաս հիմնական բայական տիպերը, նրանց խոնարհումը ներկա և անցյալ ժամանակներում: Բայի արմատական հիմքը, բառային կադապարը: Արմատական հիմքերի տեսակները: Ժխտական և հաստատական դիրքեր: Ուղիղ խնդիր:

Կանոնավոր բայեր: Կանոնավոր բայերի անցյալ ժամանակը: Խոնարհումը: Բայի ներկա ժամանակը: Անցյալ և ներկա կրավորական: Հրամայական եղանակ, կազմությունը: Հրամայական եղանակի երեք կադապարները: Բայահիմք-մասդար: Ենթակայական դերբայ: Կադապարների կազմությունը: Հարակատար դերբայ, կազմությունը և կադապարները: Թերի բայեր: Ամբողջական բայեր: Ոչ ամբողջական բայեր: Նման բայեր: Դատարկ բայեր: Կրճատ բայեր: Համզայով և կրկնավոր բայեր:

3.4 Շարահյուսություն

Պարզ նախադասության կազմությունը, անդամները:

Պարզ նախադասությունների տեսակները: Անվանական նախադասություն: Անվանական նախադասության ենթական և նրա գործածությունը: Անվանական ստորոգյալի ձևերը: Նախադասության գլխավոր անդամները: Նախադասության երկրորդական անդամները: Բառերի շարադասությունը նախադասության մեջ: Բարդ նախադասության կառուցվածքը: Շաղկապավոր նախադասություններ:

*

* *

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կտիրապետի շուրջ 900-1000 բառային միավորի, որն էլ կապահովի լեզուների իմացության համեմատական համակարգի **A1** և **A2** մակարդակները¹:

- Ուսանողը պետք է յուրացնի արաբերենի հնչյունական, գրային և քերականական համեմատաբար պարզ հասկացությունների հիմնական օրինաչափությունները:
- Տիրապետի մոտ 900-1000 բառային ու մասանագիտական դարձվածաբանական միավորի՝ դրանք օգտագործելով տարբեր թեմաներով թարգմանությունների ժամանակ (արաբերենից հայերեն և հակառակը):
- Կհասկանա արաբերեն լեզվի ձևաբանական և շարահյուսական համակարգին բնորոշ հիմնական օրինաչափությունները:

¹ **Level A1:** Can understand and use familiar everyday expressions and very basic phrases aimed at the satisfaction of needs of a concrete type. Can make basic introductions and can ask and answer questions about personal details, home country, familiar people and personal possessions. Can interact in a simple way - provided the other person talks slowly and clearly and is prepared to help.

Level A2: Can understand sentences and frequently used expressions related to areas of most immediate relevance (e.g. very basic personal and family information, shopping, local geography, employment). Can communicate in simple and routine tasks requiring a simple and direct exchange of information on familiar and routine matters. Can describe in simple terms personal background facts, immediate environment and explain matters of urgent need.

- Կտիրապետի արաբերեն գրին, ձեռք կբերի ուղղախոսական հմտություններ և կրնթերցի ու կթարգմանի ոչ բարդ մասնագիտական տեքստեր:
- Կկարողանա գրել համառոտ նկարագրական տեքստեր՝ մոտավորապես 40-50 բառի սահմանում:
- Կկարողանա ընկալել երեք բույե տևողությամբ կարճ տեքստեր առօրյա թեմաների շուրջ:
- Կկարողանա իրեն նկարագրել պարզ բառերով, հաղորդակցվել շրջապատի հետ, պատասխանել հարցերին և տալ անհրաժեշտ տեղեկություն:
- Կկարողանա հասկանալ հաճախ օգտագործվող արտահայտություններ, որոնք թույլ կտան նրան ներկայացնել ինքն իրեն, ընտանիքին և մյուսներին, պարզ տերմիններով հարցնել և տալ տեղեկություն իր երկրի, բնակավայրի, տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի, կլիմայի, ուսումնական հաստատության, իր աշխատանքային օրվա, տնային պայմաններում գործածվող առարկաների, իրեն պատկանող իրերի և այն մարդկանց մասին, որոնց ճանաչում է:
- Բացի այդ, նա պետք է կարողանա հասկացնել խոսակցին, որ նա խոսի հնարավորինս պարզ, դանդաղ և հասկանալի:

4. ԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՐՍ

3-րդ և 4-րդ կիսամյակ

Արաբերենի մասնագիտացված դասընթացը երկրորդ կուրսում նպատակ ունի ավարտել քերականական հիմնական հասկացությունների ուսումնասիրումը, կատարելագործել արտասանական հմտությունները, ճանաչել նախադասությունների հիմնական տեսակները՝ դրանք գործածելով անցած թեմաների շուրջ գրույցների ժամանակ, խորացնել արաբերենից հայերեն և հայերենից արաբերեն դիվանագիտական-մասնագիտական թարգմանության նախնական հմտությունները:

4.1 Բառապաշար

Արաբերեն լեզվի հիմնական բառային ֆոնդը, բառային կազմը: Դիվանագիտական-մասնագիտական տերմիններ: Նորաբանություններ: Փոխառություններ: Արաբերեն փոխառությունները հայերենում և նրա բարբառներում: Փոխառություններ այլ լեզուներից դեպի արաբերենի բառաֆոնդ: Լեզվի բառային կազմի համալրման աղբյուրները:

Արևմտաեվրոպական լեզուներից փոխառյալ բառերը արաբերենում:

*
* *
*

Մասնագիտացված դասընթացի հաջող ավարտին՝ 2-րդ և 3-րդ կիսամյակների վերջում, ուսանողը պետք է տիրապետի շուրջ 2500 բառային միավորի, որն էլ կապահովի լեզուների իմացության համաեվրոպական համակարգի **B1** մակարդակը²:

- Բառային միավորների այդչափ գործածությամբ նա պետք է կարողանա գրուցել Արաբական երկրների, նրանց աշխարհագրական դիրքի, արաբական հայտնի քաղաքների, պատմական որոշ հարցերի, ներկա քաղաքական ու տնտեսական իրավիճակների մասին:
- Պետք է կարողանա թարգմանել ոչ բարդ մասնագիտական տեքստեր, բանավոր և գրավոր շարադրի լսած կամ կարդացած տեքստի բովանդակությունը: Այս մակարդակում պետք է խոսի այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են ընտանիքը, սիրած զբաղմունքը և հետաքրքրությունները, դիվանագիտական աշխատանքը, ճանապարհորդությունները և այլն:
- Լեզվին բավականաչափ տիրապետելը կնպաստի անկանխատեսելի իրավիճակները հանպատրաստից նկարագրելու, գաղափարի կամ խնդրի հիմնական կետերը ճշգրտությամբ բացատրելու, վերացական թեմաների մասին մտքեր արտահայտելու համար:

² **Intermediate Level B1:** Can understand the main points of clear standard input on familiar matters regularly encountered in work, school, leisure, etc. Can deal with most situations likely to arise whilst travelling in an area where the language is spoken. Can produce simple connected text on topics which are familiar or of personal interest. Can describe experiences and events, dreams, hopes & ambitions and briefly give reasons and explanations for opinions and plans.

5. ԵՐՐՈՐԴ ԿՈՒՐՍ

5-րդ և 6-րդ կիսամյակ

Արաբերեն լեզվի մասնագիտացված դասընթացի եզրափակիչ փուլը նպատակ ունի առաջին և երկրորդ կուրսերում ստացած գիտելիքների հիման վրա զարգացնել մասնագիտական հաղորդակցման բանավոր և գրավոր խոսքի հմտությունները, արաբերենից հայերեն և հայերենից արաբերեն թարգմանության մասնագիտական կարողությունները:

5.1 Մասնագիտական բառապաշար

Սա համարվում է ողջ ուսումնական գործընթացի այն հիմնական փուլը, երբ ուսանողը պետք է մասնագիտական ուղղվածություն ստանա և անթերի հաղորդակցվել կարողանա արաբերեն լեզվով: Թեմաները ողջ դասավանդման գործընթացում հիմնականում պետք է լինեն մասնագիտական՝ դիվանագիտական ուղղվածության:

Հատուկ անունների, պաշտոնական հիմնարկների անունների հաղորդումը: Աշխարհագրական անունների և միջազգային բառերի թարգմանությունը: Թերթային և արաբական կայքէջերի մասնագիտական բառապաշարի յուրացումը:

Մասնագիտացված դասընթացը նպատակ է հետապնդում կատարելագործել թարգմանչական հմտությունները՝ ներառելով երկկողմ ու համաժամանակյա թարգմանչական տարրերը: Նախատեսվում է ծանոթացում լեզվի տեսության հետ: Լեզու և բարբառ: Արաբերենի դիվանագիտական-մասնագիտական հաղորդակցման ծրագրում նախատեսված սեմինար պարապմունքները նպատակաուղղված պետք է լինեն թարգմանչական աշխատանքների կատարմանը:

*

* *

Դիվանագիտական-մասնագիտական դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է սահուն և ճիշտ խոսի հասարակական-քաղաքական, դիվանագիտական, մշակութային թեմաներով: Ըստ այդմ ուսա-

նողը պետք է ակտիվորեն տիրապետի շուրջ 4000 բառային միավորի, խորացնի մասնագիտական գիտելիքները, որն էլ կապահովի լեզուների իմացության համաեվրոպական համակարգի B2 մակարդակը³:

Երրորդ կուրսի վերջին ուսանողը պետք է կարողանա զրուցել դիվանագիտական-մասնագիտական, պատմական, մշակութային, քաղաքական, ռազմական թեմաների շուրջ:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությունը արաբական երկրներում: Դեսպանություններ: Հյուպատոսություններ: Հյուպատոսական ծառայություն: Այցելությունների և հանդիպումների կազմակերպում: Դիվանագիտական գրագրություն: Դիվանագիտական հուշագրերի ձևակերպում: Քաղաքական ժողովներ: Բանակցություններ: Միջազգային կազմակերպություններ և կառույցներ: Արաբական պետությունների լիգա: Իսլամական կոնֆերանսի երկրներ:

³ **Intermediate Level B2:** Can understand the main ideas of complex text on both concrete and abstract topics, including technical discussions regarding profession or academic field of specialization. Can interact with a degree of fluency and spontaneity that makes regular interaction with native speakers quite possible without strain for either party. Can produce clear, detailed text on a wide range of subjects and explain a viewpoint on a topical issue giving the advantages and disadvantages of various options.

ՕՉՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գարուչյան Հ, Կարաբեկյան Ս, Գրական արարերենի գործառական քերականություն, Երևան 2003թ.
2. Գրական արարերենի գործնական դասընթաց – ԵՊՀ արարագիտության ամբիոն – Երևան 2010թ.
3. Լեզուների իմացության /իրազեկության համաեվրոպական համակարգ /Ուսումնառություն, Դասավանդում, Գնահատում, Steering Committee for Education Language Policy Division, Strasbourg, Նորք գրատուն, 2005թ. էջ 127
4. Մանուկյան Ա. Քաղաքագիտական, դիվանանագիտական և իրավագիտական տեքստեր, Երևան 2008թ.
5. Մանուկյան Մ., Տնիկյան Մ., Գրական արարերենի տեքստերի և վարժությունների ժողովածու արաբական բաժնի 4-րդ կուրսի ուսանողների համար, Երևան 2006թ.
6. Гафар Махмуд, Экстренный арабский: учеб. Пособие, пер. с англ. Н.Ф. Орловой, Москва 2007.
7. Гранде Б. М. Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, Москва 1963г.
8. Лебедев В.В., Бочкарев Г.И, Читаем арабские тексты, (Основной этап), Москва 2002г.
9. Лебедев В.В., Бочкарев Г.И, Читаем арабские тексты, (Продвинутый этап), Москва 2002г.
10. Лебедев В. Г., Тюрева Л. С. Практический курс арабского литературного языка. Восток-Запад, 2005 г.
11. Оде-Васильева К.В. Учебник арабского языка, Л. 1936г.
12. Халидов Б.З. Учебник арабского языка, Ташкент, 1965г.
13. Кузьмин С. А. Учебник арабского языка. Для первого года обучения. Москва 2001.
14. Семенов Д.В. Синтаксис современного арабского литературного языка, Москва 1941г.
15. Шарбатов. Г.Ш, Самоучитель арабского языка, Москва 1965г.
16. Шарбатов. Г.Ш, Ковалев А.А. Учебник арабского языка, Москва 1966г.
17. Элементарная грамматика арабского языка, сост. И.Д. Ибрагимов, А. Н. Шимкович. Начальный уровень, Москва 2008 г.
18. Юшманов Н.В Грамматика литературного арабского языка, под редакцией и с предисловием И.Ю. Крачковского, Санкт-Петербург, Юридический центр Пресс 1999.
19. Юшманов Н.В, Грамматика литературного арабского языка, Л, 1964г.
20. Фролова О. Б. Мы говорим по-арабски: Учебное пособие. Санкт-Петербург 2001.

21. Яшуков. А. М., Методическое пособие по изучению арабского языка, Москва 2006 г.
22. Яковенко Э.В. Практический курс перевода (Арабский язык) Восточная литература" РАН, Москва 2007 г.
23. Wright W.A. Grammer of the Arabic Language, Vol 1,2, Cambridge, 1962
24. Ziadeh F.J and Winder R.B. An Introduction to the Modern Arabic. Princeton, 1957.

∴ .25

∴ .26

∴ .27

∴ .28

∴ .29

∴ .30

.31

∴

∴ .32

. 1963-1962

∴ .33

. 1958 ∴ .34

.35

∴ .36

. 1961

∴ .37

Բառարաններ և զրուցարաններ

38. Ասատրյան Հ, Պողոսյան Ս, Ժամանակակից արաբերեն լեզվի հոմանիշների արաբերեն-հայերեն համառոտ բառարան, Երևան 1990թ.
39. Զրուցարան Հայերեն-Արաբերեն, Ս. Պետրոսյան, Ս.Պողոսյան, Երևան, 1997թ.
40. Арабский разговорник и словарь, 3-е изд.,испр. Москва, Живой язык, 2006г.
41. Баранов Х.К, Арабско-русский словарь, Москва 1957г.
42. Барисов В. М, Русско-арабский словарь, Москва 1995г.
43. Шарбатов. Г.Ш, Русско-арабский учебный словарь, Москва 1964г.
44. Dictionary of Diplomatic Terminology English-Arabic with Arabic-English Glossary, by Gamal Barakat, Beirut 1985
45. Dictionary of international relations and conference terminology: English-Arabic with English and Arabic indexes and appendices, by Hassan Abdallah, Beirut 1982.
46. Dictionary of Arabic Grammatical Nomenclature Arabic-English, by Antoine El-Dahdah, Librairie du Liban 2003
47. Dictionary of Arabic Verbs, by Dr. Duleim Masoud Al Qahtani, Librairie du Liban Publishers 2003.
48. Al Mawrid Al Akbar: A Modern English-Arabic Dictionary, By: Munir Baalbaki, Dar Al Ilm Lilmalayeen, 2005
49. Al Mawrid Al Hadeeth 2010, By: Munir Baalbaki, Dr. Ramzi Munir Ballbaki, Dar El Ilm Lilmalayin, Beirut, 2010
50. Al Mawrid Al Muyassar, by Dr. Rohi Baalbaki, Mounir Baalbaki, Dar El Ilm Lilmalayin, Beirut, 2007
51. Al Mawrid Al Muyassar Arabic-English / English-Arabic, By: Dr. Rohi Baalbaki & Munir Baalbaki, Dar El Ilm Lil Malayin, 2008
52. Wehr H. Arabisches Wörterbuch für die Schriftsprache der Gegenwart, Leipzig, 1956.
53. Fanous W, Arabisch-Deutsches Technisches Wörterbuch, Kairo, 1962.
54. Elias- Modern Dictionary. Arabic-English, Cairo, 1954.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի նպատակը.....	3
1.1 Գործնական նպատակ.....	3
1.2 Կրթական նպատակ.....	4
2. Դասընթացի բովանդակությունը	5
3. Առաջին կուրս.....	5
3.1 Հնչյունաբանության	6
3.2 Ձևաբանություն	6
3.3 Բայ.....	7
3.4 Շարահյուսություն	8
4. Երկրորդ կուրս	9
4.1 Բառապաշար.....	10
5. Երրորդ կուրս.....	11
5.1 Մասնագիտական բառապաշար.....	11
Օգտակար գրականություն	13

ԻՄՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՐԱՉԻԿԻ

ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՕՄԱՆԴԱԿ ԿՑՈՒԹ

Ստորագրված է տպագրության 23.03.2011 թ.:
Չափսը՝ 60x84¹/₁₆ : Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 0.8 մամուլ,
տպագր. 1.0 մամուլ= 0.9 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 50:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: